

*ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
2021Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏԻՆ*




**Սպառողական գների փոփոխությունները Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվար-մարտին՝**

Հայաստանի Հանրապետության սպառողական շուկայում 12-ամսյա գնաճը (2021թ. մարտը 2020թ. մարտի նկատմամբ) կազմել է 5.8%, իսկ նախորդ ամսվա նկատմամբ՝ 1.0%:

Անհատական սպառում՝ ըստ նպատակների դասակարգիչ (ԱՄԸՆԴ) երկու նիշ մակարդակ	2021թ.			
	մարտը		հունվար-մարտը 2020թ. հունվար-մարտի նկատմամբ,%	մարտը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2020թ. մարտի նկատմամբ, %	2021թ. փետրվարի նկատմամբ,%		
00 Սպառողական գների ինդեքս-ընդամենը այդ թվում՝	5.8	1.0	5.2	103.8
01 սննդամթերք և ոչ ակոհոլային խմիչք	7.4	0.9	7.2	106.1
02 ակոհոլային խմիչք, ծխախոտային արտադրատեսակներ	9.2	1.9	9.5	105.0
03 հագուստ և կոշիկ	6.9	2.0	4.9	103.7
04 բնակարանային ծառայություններ, ջուր, էլեկտրաէներգիա, գազ և վառելիքի այլ տեսակներ	1.5	0.7	0.9	100.6
05 տնային գործածության առարկաներ, կենցաղային տեխնիկա և բնակարաննե րի խնամքի ամենօրյա գործունեություն	8.8	2.0	7.1	105.3
06 առողջապահություն	6.6	0.9	5.9	103.8
07 տրանսպորտ	8.9	1.2	7.2	102.7
08 կապ	1.0	0.2	0.8	101.0
09 հանգիստ և մշակույթ	1.2	0.9	0.1	102.6
10 կրթություն	2.1	0.0	2.0	100.0
11 ռեստորաններ և հյուրանոցներ	2.5	0.1	2.1	100.8
12 տարբեր ապրանքներ և ծառայություններ	5.2	1.0	4.3	102.7

**Սպառողական գների փոփոխությունները 2021թ. մարտին 2015թ. նկատմամբ \*\***




\* Սույն հաղորդագրությունում հիմնականում տրված է Հայաստանի Հանրապետությունում 2021թ. մարտի գնային փոփոխությունների հակիրճ մեկնաբանությունը: Սպառողական գների և ինդեքսների ավելի ընդարձակ (այդ թվում՝ կուտակային (աճողական)) տեղեկատվությունը գետեղվում է «Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում» ամսական տեղեկագրում (տեղեկագրի ծածկագիրը՝ 1300-305):

\*\* Եվրոստատի կողմից սահմանված ինդեքսի հղման ժամանակաշրջան:


Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. մարտին (նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ)

%



Ենթաինդեքսների փոփոխությունների ազդեցությունը սպառողական գների ինդեքսի ընդհանուր ցուցանիշի վրա 2021թ. մարտին (նախորդ ամսվա նկատմամբ)

%




Սպառողական գների փոփոխություններն ըստ սպառման հիմնական խմբերի

	2021թ.			
	մարտը		հունվար-մարտը 2020թ. հունվար-մարտի նկատմամբ, %	մարտը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ, ինդեքս
	2020թ. մարտի նկատմամբ, %	2021թ. փետրվարի նկատմամբ, %		
Սպառման ապրանքներ	7.8	1.2	7.2	105.4
<i>այդ թվում՝</i>				
աննդամթերք, խմիչք և ծխախոտ	7.6	1.0	7.4	106.0
ոչ պարենային ապրանքներ	8.4	1.6	6.9	104.3
Ծառայություններ	2.2	0.5	1.7	100.9

Սպառողական գների հավելածը 2012-2021թթ. մարտին

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %




Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2021թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական գներն աճել են 0.5-1.1%-ով, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում:

**Մենդանների գներ:** 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ հանրապետությունում արձանագրվել է սննդամթերքի և ոչ ալկոհոլային խմիչքի 7.4%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ 0.9% գնաճ: Վերջինիս մեծապես նպաստել են ձկան և ծովամթերքի, կաթնամթերքի, յուղերի և ճարպերի, մրգի՝ 1.6-6.9% գնաճերը:

Մրգի ապրանքախմբում<sup>1</sup> 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ արձանագրվել է 10.9%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 6.9% գնաճ:

Մրգի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-մարտին

նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %



Յուղերի և ճարպերի ապրանքախմբում 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ արձանագրվել է 24.6%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 4.3% գնաճ (արևածաղկի բուսական յուղի միջին գնաճը 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ կազմել է 62.2%, իսկ 2020թ. փետրվարի համեմատ՝ 8.7%):

Շաքարի և շաքարավազի ապրանքախմբում 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ գրանցվել է 40.9%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 2.3% գնաճ:

<sup>1</sup> 2021թ. փետրվար-մարտին 2020թ. փետրվար և մարտ ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների ինդեքսների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

Կաթնամթերք, պանիր և ձու ապրանքախմբում 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ գրանցվել է 16.5%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 2.2% գնաճ: Չվի զինը 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ աճել է 78.2%-ով, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 8.1%-ով:

Ձկան և ծովամթերքի ապրանքախմբում 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ արձանագրվել է 2.6%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 1.6% գնաճ:

2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ մսամթերքի ապրանքախմբում գրանցվել է 3.4%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 0.8% գնաճ:


Ալկոհոլային խմիչքի և ծխախոտային արտադրատեսակների ապրանքախմբում 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ արձանագրվել է 9.2%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 1.9% գնաճ: Ալկոհոլային խմիչքի միջին գնաճը 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ կազմել է 9.0%, 2021թ. փետրվարի համեմատ՝ 1.9%, իսկ ծխախոտային արտադրատեսակներինը՝ համապատասխանաբար 9.6% և 1.9%:

2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ հացաբուլկեղենի և ձավարեղենի ապրանքախմբում գրանցվել է 9.4%, 2021թ. փետրվարի համեմատ՝ 0.6% գնաճ (հացի և ալյուրի գնաճը 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ կազմել է համապատասխանաբար 8.6% և 14.4%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 0.2% և 1.6%):

2021թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ոչ ալկոհոլային խմիչքի, սուրճի, թեյի կակաոյի 0.7% գնաճ:

Բանջարեղենի ապրանքախմբում՝ 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ արձանագրվել է 1.4% գնաճ, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 4.7% գնանկում:

Բանջարեղենի գների փոփոխությունները 2019-2021թթ. հունվար-մարտին  
նախորդ տարվա համապատասխան ամսվա նկատմամբ, %




**Ոչ պարենային ապրանքների գներ:** 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 8.4%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 1.6% գնաճ:

2021թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է գորգերի և հատակի ծածկերի՝ 0.3%, կենցաղային և այգեգործական գործիքների՝ 0.8%, կահույքի և կահավորանքի՝ 0.9%, ապակե ամանեղենի, ճաշասպասքի և տնային կահ-կարասու՝ 1.1%, դեղագործական ապրանքների, ոսկերչական զարդերի՝ 1.2%, տարբեր տեսակի կոշիկեղենի՝ 1.4%, վառելանյութերի և քսանյութերի՝ 1.5%, խոշոր կենցաղային սարքերի՝ 1.6%, կենցաղային փոքր էլեկտրական սարքերի՝ 1.7%, հագուստի՝ 2.4%, մաքրող, լվացող միջոցների՝ 2.9% գնաճ:

2021թ. մարտին փետրվարի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են 8.2% և 11.2%-ով: 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի 4.9% գնաճ, իսկ դիզելային վառելիքի գները նվազել են 4.9%-ով: 2021թ. մարտին 2020թ. դեկտեմբերի համեմատ արձանագրվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 14.0% և 18.1% գնաճ:

Բենզինի և դիզելային վառելիքի միջին ամսական գների փոփոխությունները 2018-2021թթ.

2015թ. նկատմամբ



**Ծառայությունների սակագներ:** Մատուցված ծառայությունների ոլորտում 2021թ. մարտին 2020թ. մարտի համեմատ արձանագրվել է սակագների 2.2%, իսկ 2021թ. փետրվարի համեմատ՝ 0.5% հավելում:

2021թ. մարտին փետրվարի համեմատ հանրապետությունում գրանցվել է վարսավիրանոցների և անձնական սպասարկման սրահների ծառայությունների գների 3.1% հավելում:

**Արտաթույթի շուկա:** 2021թ. մարտին փետրվարի համեմատ սպառողական և արտաթույթի շուկաներում արձանագրվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի՝ համապատասխանաբար 1.0% և 0.8% հավելում (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2021թ. մարտին 2020թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 3.8% և 1.7% հավելում: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է սպառողական գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 1.7% և 2.3% հավելում: 2021թ. մարտին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 527.7 դրամ, ինչը 7.9%-ով բարձր է 2020թ. մարտի համապատասխան ցուցանիշից (489.0 դրամ):

Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական գների  
տոկոսային փոփոխությունները ՀՀ-ում

	2021թ.			
	փետրվարը		մարտը	
	2021թ. հունվարի նկատմամբ	2020թ. փետրվարի նկատմամբ	2021թ. փետրվարի նկատմամբ	2020թ. մարտի նկատմամբ
Ինձոր	-7.2	23.7	3.6	22.5
Տանձ	-4.6	9.0	9.3	8.4
Նուռ	8.6	15.2	17.1	19.1
Իսաղող	-5.3	-23.2	8.3	-22.7
Ադամաթուզ (բանան)	-0.9	0.8	10.6	13.6
Նարինջ	-6.6	27.0	1.8	21.6
Մանդարին	1.4	12.5	21.8	18.9
Կիտրոն	1.7	7.6	16.2	13.9
Ելակ	4.8	-6.2	20.6	8.1
Կաղամբ	-3.0	-3.3	-6.6	-11.9
Կանաչ սոխ	-26.7	19.3	-29.3	-3.4
Իսառը կանաչեղեն	-4.0	42.9	-13.1	30.2
Լոլիկ	12.5	8.0	-5.1	-8.1
Վարունգ	4.0	7.4	-8.5	-14.4
Սմբուկ	-0.7	46.9	-19.5	6.3
Պղպեղ	1.2	16.0	-1.1	-5.8
Գազար	12.6	12.0	3.0	10.2
Ճակնդեղ	2.0	-26.2	-5.8	-31.6
Գլուխ սոխ	10.9	-6.5	10.6	-5.3
Սխտոր	-1.9	77.1	-2.9	44.1
Սունկ	10.5	12.9	1.8	15.5
Կարտոֆիլ	5.8	-15.5	0.9	-13.9

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում<sup>1</sup>

	2020թ. դեկտեմբերը 2019թ. դեկտեմբերի նկատմամբ	2021թ.		
		հունվարը	փետրվարը	փետրվարը 2020թ. դեկտեմբերի նկատմամբ
		նախորդ ամսվա նկատմամբ		
Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ)	...	100.7	100.8	101.6
Հայաստան	103.7	102.2	100.6	102.8
Ռուսաստան	104.9	100.7	100.8	101.5
Բելառուս	107.4	101.1	101.9	103.1
Ղազախստան	107.5	100.6	100.7	101.3
Ղրղզստան	109.7	101.0	101.1	102.0
Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ-27) <sup>2</sup>	100.2	100.3	100.3	100.5
Ավստրիա	101.0	99.3	100.3	99.6
Բելգիա	100.4	99.1	101.2	100.3
Բուլղարիա	100.0	100.2	100.5	100.7
Հունգարիա	102.8	100.9	100.7	101.6
Գերմանիա	99.3	101.4	100.6	102.0
Հունաստան	97.6	98.7	100.2	98.9
Դանիա	100.4	100.2	100.5	100.7
Իռլանդիա	99.0	100.2	100.3	100.5
Իսպանիա	99.4	99.6	99.4	99.0
Իտալիա	99.7	99.1	99.8	98.9
Կիպրոս	99.2	99.2	100.1	99.3
Լատվիա	99.5	100.4	100.4	100.8
Լիտվա	99.9	100.5	100.3	100.7
Լյուքսեմբուրգ	99.7	100.9	99.4	100.3
Մալթա	100.2	98.7	100.5	99.2
Նիդերլանդներ	100.9	99.3	101.2	100.5
Լեհաստան	103.4	100.9	100.5	101.5
Պորտուգալիա	99.7	99.7	99.5	99.2
Ռումինիա	101.8	100.9	100.4	101.3
Սլովակիա	101.6	100.3	100.3	100.6
Սլովենիա	98.8	99.7	100.2	99.9
Ֆինլանդիա	100.2	100.4	100.3	100.8
Ֆրանսիա	100.0	100.3	100.0	100.3
Խորվաթիա	99.7	100.1	100.2	100.3
Չեխիա	102.4	101.3	100.2	101.5
Շվեդիա	100.6	99.9	100.3	100.3
Էստոնիա	99.1	100.5	100.9	101.4
Այլ երկրներ				
Բրազիլիա	104.5	100.3	100.9	101.1
Կանադա	100.7	100.6	100.5	101.1
Չինաստան	100.2	101.0	100.6	101.6
Նորվեգիա	101.4	101.1	100.8	101.9
Կորեայի Հանրապետություն	100.5	100.8	100.5	101.3
Միացյալ Թագավորություն	...	99.8	100.1	99.9
ԱՄՆ	101.4	100.4	100.5	101.0
Թուրքիա	114.6	101.7	100.9	102.6
Ուկրաինա	105.0	101.3	101.0	102.3
Մոլդովա	100.4	100.5	100.4	100.8
Վրաստան	102.4	101.1	101.1	102.2
Շվեյցարիա	99.0	100.0	100.1	100.1
Ճապոնիա	98.8	100.5	100.0	100.5

<sup>1</sup> Տեղեկատվությունը պատրաստվել է Ռուսաստանի Դաշնության պետական վիճակագրական ծառայության կայքում գետեղված «2021թ. փետրվարի Ռուսաստանի և արտասահմանյան երկրների սպառողական գների ինդեքսների վերաբերյալ տեղեկանք»-ի հիման վրա:

<sup>2</sup> Եվրամիության երկրների համար ներկայացված են միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվար-մարտին» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2021 թվականի վիճակագրական ծրագրի», նախատեսված է 2021թ. ապրիլ ամսվա 3-րդ աշխատանքային օրը (տե՛ս՝ ծածկագիր 1300-305, Մաս 3, էջ 131):